

**ՀՕԳՈՒՏ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ**

**ՆԱՐԻՆԵ ՄԱՅԻԼՅԱՆ**

*(Փոփր և միջին բիզնեսի հիմնադրամ)  
«Փոփր բիզնեսի հարկման համակարգի բարեփոխումներ» ծրագրի ղեկավար*

**ՄԱՐԻԱ ՓԱՆՈՍՅԱՆ**

*Հասարակության հետ կապերի գծով խորհրդատու*



Անցումային շրջանում գտնվող երկրներում ՓՄՁ-ն կոչված է առաջատար դեր ունենալու պետության տնտեսական զարգացման մեջ: Հայաստանում այս ոլորտի զարգացման կարևորության մասին խոսվում է դեռևս 90-ական թվականներից: Պետական մակարդակով դա դրսևորվում է պարբերաբար ընդունվող օրենքներով ու ծրագրերով, որոնցում կարևորվում է ձեռնարկատիրության դերը բարեփոխումների իրականացման, ճգնաժամի հաղթահարման և հասարակության սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում:

Տարբեր երկրներ, այդ թվում՝ Լիտվան, Հունգարիան, Հնդկաստանը, Չինաստանը, վաղուց են զնահատել ՓՄՁ-ի դերը շուկայական տնտեսություն կերտելու ճանապարհին: Իսկ Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում ոլորտում արված ներդրումները մեծ դեր խաղացին ետպատերազմյան շրջանի տնտեսական ճգնաժամի հաղթահարման գործում:

Հանրահայտ է, որ զարգացած ՓՄՁ ունենալը նշանակում է բնակչության զբաղվածության, հետևաբար նաև գործազրկության խնդրի լուծման նախադրյալների, հասարակության միջին խավի ձևավորման կարևոր սոցիալական գործոնի, հետևաբար նաև քաղաքացիական հասարակության կայացման և դրանում սոցիալական խաղաղության ու քաղաքական կայունության հիմքերի ապահովում:

Սակայն Հայաստանում այսօր ՓՄՁ-ի վիճակը հեռու է (շուկայական տնտեսության համար) բավարար լինելուց: Մեր երկրում այս ոլորտի կայացման

ճանապարհին դեռևս առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնցից ամենափնտնականներն են անկայուն և հակասական օրենսդրական քաղաքականությունը, հարկման անկատար համակարգը, ֆինանսական ռեսուրսների ձեռք բերման հետ կապված դժվարությունները: Ներկայումս ՓՄՁ-ի աջակցման պետական ծրագրերը չեն խթանում դրա զարգացումը: Դժվար չէ նկատել այդ ոլորտում պետության կողմից քարոզվող գաղափարախոսության և գործնականում իրականացվող քաղաքականության միջև անհամապատասխանությունը: Այսօր հարկերը «խլում են» փոքր ձեռնարկությունների շահույթի նույնիսկ այն մասը, որն անհրաժեշտ է աշխատանքի դիմաց վճարումների համար, միջոց չթողնելով ոչ միայն զարգացման, այլ նույնիսկ պարզ վերարտադրության համար: Արդյունքում՝ կան սովորականություն, կան սնանկացում: Ստացվում է, որ «փոքր» ձեռներեցին, լավագույն դեպքում, թույլ են տալիս գոյատևել մի նեղ «տիրույթում», որ հանկարծ չմեծանա ու չդառնա «միջին» կամ էլ, աստված մի արասցե, «խոշոր»:

Այնինչ, ՓՄՁ-ի հարկման ռազմավարությունը, առաջին հերթին, պետք է ուղղված լինի եկամուտների օրինականացմանը, այլ ոչ թե միայն ֆիսկալ վերահսկման դեր կատարի: Անհրաժեշտ է մշակել և իրականացնել հարկային բարեփոխումների այնպիսի համապարփակ ծրագիր, որը հնարավորություն կտա պետական շահերը ներդաշնակել ՓՄՁ-ի շահերի հետ և նպատակաուղղված կլինի մեր երկրում ՓՄՁ-ի աճի ու զարգացման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: Նման մոտեցումը ենթադրում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնք թույլ կտան նախ ավելացնել օրինական գործողների թիվը, ապա՝ ապահովել դրանց կայացումն ու կայունացումը՝ ապագայում խոշոր հարկատու ունենալու հեռանկարով: Արդյունքում, պետական բյուջեում կավելանա փոքր բիզնեսի բաժնեմասը, ինչն էլ իր հերթին կվկայի խելամիտ ու հեռանկարային պետական քաղաքականության վարման մասին:

Տնտեսության որևէ ոլորտում արագ ու նկատելի արդյունք ստանալու եղանակներից է համապատասխան հարկային արտոնությունների տրամադրումը՝ հարկման ռեժիմի մեղմացման և կան հարկային «արծակուրդի» ձևով: Ուստի անհրաժեշտ է մշակել և կիրառել հարկային արտոնությունների այնպիսի համակարգ, որը կարող է նպաստել





նորաստեղծ ՓՄՁ-ի սուբյեկտների կայացմանը տնտեսական գործունեության առաջին տարիներին, մասնավորապես՝ շահութահարկի գծով համապատասխան արտոնությունների սահմանում:

Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը (ՓԱԲՀ) ներկայումս իրականացնում է «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության կողմից ֆինանսավորվող «Փոքր բիզնեսի հարկման համակարգի բարեփոխումներ» ծրագիրը, որը նպատակ ունի մշակել և ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: Առաջարկվող նախագիծը փոքր ձեռներեցության կայացումն ու զարգացումը խթանելու նպատակով նոր ստեղծվող փոքր ձեռնարկությունների համար առաջարկում է առաջին 2 տարում տրամադրել «հարկային արձակուրդ», իսկ հետագայում՝ շահույթը հարկել 50 %-ով: Հիմնադրամն իր կարգավիճակի համաձայն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք չունի: Այն ծրագրի շրջանակներում ակտիվորեն համագործակցում է տնտեսական քաղաքականության մշակմանը մասնակից պետական կառույցների և կազմակերպությունների, մասնավորապես, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հետ:

Ծրագրի իրականացման ընթացքում ՓԱԲՀ-ն ակնկալում է նաև Հայաստանի գործարար ընկերակցությունների գործունե աջակցությունը: Ծրագրով նախատեսված են և անցկացվում են քննարկումներ՝ կլոր սեղանների շարք և սեմինարներ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Հանրապետությունում ձեռներեցների բացարձակ մեծամասնության համար այսօր ՓՄՁ-ի հիմնախնդիրներն ընդհանուր բնույթ են կրում, բայց դրանք իշխանական աստիճաններում լսելի դարձնելու համար լուրջ անելիքներ կան:

Չարգացած երկրների փորձը վկայում է, որ տնտեսական բարեփոխումներ անհնար է իրականացնել առանց դրանց օգտին հանդես եկող գործարար ընկերակցությունների աջակցության: Սակայն մեր իրականությունում ՓՄՁ-ի ինտեգրացումը դեռևս կայացման ճանապարհին է: Բացի այդ, հայ ձեռնարկատերերին առավել բնորոշ է շահերի անհատական պաշտպանությունը, ինչն անարդյունավետ է, քանի որ սեփական սահմանափակ ռեսուրսները ՓՄՁ-ի սուբյեկտներին թույլ չեն տալիս

գործել նույնչափ ազատ ու անկախ, որչափ խոշորներն են ծավալվում: Ուստի, տնտեսական շահերի պաշտպանության առումով փոքր ձեռներեցության համար առավել կարևորվում է գործարար միավորումների դերը:

ՓՄՁ-ի շահերի պաշտպանության հայեցակարգը դեմոկրատական համակարգի կառուցման կարևոր օղակներից է: Այդ հայեցակարգի կենսագործման մեջ, պետական կառույցներից բացի, հիմնական դերը գործարար ընկերակցություններին է, որոնք ներազդելով պետության օրենսդիր և գործադիր մարմինների վրա, գործնականում ապահովում են բիզնեսի շահերի պաշտպանությունը: Արդյունավետ գործելու և իրենց ձայնն իշխանություններին հասցնելու համար գործարար միավորումները պետք է միավորեն ջանքերը: Սակայն Հայաստանում գործարար համայնքը բավական ցրված է: Գործարար միավորումների միջև համագործակցությունն ու շփումները թույլ են, ինչը բացասաբար է անդրադառնում բիզնեսի շահերի պաշտպանության հնարավորությունների վրա: Ուստի գործարար միավորումների համար ուժերի համախմբումը և կոնսոլիդացումն այսօր առաջնահերթ խնդիրներ են: Այդ առումով բացառիկ կարևորություն ունի Հայաստանի գործարար միավորումների միջև ոչ ֆորմալ համադաշնությունների ստեղծումը, որոնք կհամախմբեն գործարար միավորումներին ընդհանուր խնդիրների շուրջ և գործարար համայնքի ձայնը լսելի կդարձնեն պետական իշխանական կառույցներում: Համատեղ ջանքերի շնորհիվ գործարար միավորումները պետք է հասնեն նրան, որ հարկային օրենսդրության մշակմանն ու քննարկումներին ներգրավվեն ՓՄՁ-ի շահերը ներկայացնող ոչ առևտրային կազմակերպություններ, գործարար միություններ և հասարակական այլ կառույցներ, բացի այդ, նկատի առնվեն նրանց կողմից առաջ քաշվող խնդիրներն ու առաջարկությունները:

Այսօր փոքր ձեռներեցությունը մեզանում աշխատունակ բնակչության աղքատության հաղթահարման կարևորագույն միջոցներից է: Խթանելով քաղաքացիների ձեռնարկատիրական նախաձեռնությունը՝ մենք կպաշտպանենք բարեկեցիկ կյանքի, ինքնապահովման ժողովրդի ձգտումն ու, վերջին հաշվով, կծեղենք մեր ապագան:

